ՓՈԱՆԵՒՈՒԹԵՐՈՒԴ—ՏԱՐԻ—ԹՒ—2444—ԵՐԿՈՒՇԱԲԹԻ—8—ՀՈԿՏԵՄԲԵՐ—Ն. Տ—20—ՀՈԿՏԵՄԲԵՐ—1879

ԳԱՅՄԱՆԴ

Տարեկան գին կ. Փոլոյ համար. 10 Մէճ.
» » Գաւառաց » 2 Լիրա
Վեցամս. » Կ. Փոլոյ » 5 Մէճ.
» » Գաւառաց » 1 Լիրա
Օտար Երկիրներու » 50 Ֆր.
Մանուցման առդը մէկ անգամի համար 3 գուրուշ, երկու անգամի համար 2 գուշ է. աւելի անգամներու համար զատ սակարկութիւն կըլայ։
Իրաքանչիւր թիւ 40 փարա արժ։

ՄԱՄԱՆ

ԼՐԱԳԻՐ

ՀԱՆԱՊԱՋՕՐԵԱՅ

ԳԱՅՄԱՆԴ

Գուրս գնացած լրագրաց ճանրաձախքը խմբագրութեան վրայ է։
Լրագրոյս վերաբերեալ նամակ կամ որ և իցէ գրութիւն խմբագիր—Ցնօրէնին պիտի ուղղուի, Գալատիա Սանտրքճըլար Ճատտէսի թիւ 198, Նօրօ խան, Մասիսի գրասենեակը։
Ճանրաձախքը չվճարուած նամակ չընդունուիր։
Զատրուած նամակ, յօդուած, եւ եւ չեն տրուիր։

ԿՈՍՏԱՆԴԻՆՈՒՊՈԼԻՍ 8 ՀՈԿՏԵՄԲԵՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ռօպէրթս զօրավարին Բեսպիլի մէջ յաղթանակը կատարեալ կերեւի. այն վատ և վայրենի ապստամբներն, որք Անգղիական դեսպանատան մէջ ղընուած ալի մը մարդոյ վրայ դաղանաբար յարձակելով ջարդած էին, ոչ միայն չկրցին Անգղիական զօրաց լուրջ դիմադրութիւն մ'ընել, այլ և աւարառութենէ ետև աներևոյթ եղած կ'երևին։ Իրենց նպատակն աւար էր և իւրաքանչիւրը զայն ձեռք բերելէ ետև քաշուած կերևի։ Իսկ Ռօպէրթս զօրավարն իւր Բեսպիլ մտնելուն առթիւ բանախօսութիւն մ'ընելով յայտարարեր է թէ Պալա—Հիսարի միջնաբերդին քանդումն որոշուած է, թէ երկրին վրայ պատերազմական տուրք մը պիտի դրուի, թէ գլխաւոր քաղաքները պաշարման վիճակի ներքև առնուելով զինուորական կառավարիչներ պիտի կարգուին, և թէ դեսպանատան պաշտօնատարներուն սպանման հեղինակները դանողներուն մեծ վարձք պիտի արուի։ Այսպէս Բեսպիլ իւր արժանաւոր պատիժը կ'ստանայ։ Քաղաքակրթութեան զէնքն և զինուորական կրթութիւնը քիչ ժամանակի մէջ յաղթեց բարբարոս և անկիրթ քաջութեան։ Անգղիական փոքրիկ զօրաբանակը, ժամանակիս նորահնար զէնքերով զինեալ և կրթութեամբ զօրաւոր, չորս հինգ միլիոնի չափ բնակիչ ունեցող Աֆղանստանայ մայրաքաղաքը կը մտնէ յաղթանակաւ։ Այս բանը միանգամ ևս կը հաստատէ գիտութեանց և արուեստից ոյժն, որ գրեթէ անդիմադրելի եղած է։ Անգղիական յաղթանակը կըընայ տակաւին տեղ տեղ ապստամբութեանց և սպանութեանց առիթ տալ, բայց վախճանը միևնոյն է. 1842 ին ամբողջ Անգղիական բանակ մը Բեսպիլի մէջ անփութութեան զոհ դնաց, սակայն Անգղիա դարձեալ պատժած էր Աֆղաններն։ Ուստի եթէ նորէն ապստամբութիւններ ծագին, զսպողական միջոցներ ձեռք պիտի առնուին։ Անգղիա կամայ ակամայ Աֆղանստանի մէջ բռնուեցաւ, և չկրնար դիւրաւ ետ քաշուիլ, քանզի այն ժամանակ կատարեալ անիշխանութիւն կը տիրէ ի Հնդս Անգղիական շահուց։ Աղատամիտ մասը կըընայ բողոքել պատերազմական ծախուց և Աֆղանստանի մէջ բռնուած ընթացքին վտանգներուն դէմ. դըժբաղդաբար՝ դ'ոնէ առժամեայ գրաւումէ մը զատ հիմայ ուրիշ միջոց չը տեսնուիր։

Լորտ Պիքոնսֆիլտի ասողը դարձեալ կը փայլի, և միանգամ ևս իւր դժուարին մէկ ձեռնարկն յաջողութեամբ կը պսակուի։ Խորհրդարանը բացուած ժամանակ, Բեսպիլի դեսպանատան վրայ եղած յարձակման փոխարէն՝ լորտ Պիքոնսֆիլտ կրնայ իւր սովորական ճարտարախօսութեամբ ցուցնել Բեսպիլի գրաւումը, Պալա Հիսարի քանդումն, և հաւանականաբար մարդասպաններուն պատժուիլը։ Զուլուստանի և Աֆղանստանի յաղթանակները լորտ Պիքոնսֆիլտի ժողովրդականութիւնը կը վերանորոգեն և զինք կը պաշտպանեն հակառակորդաց քննադատութիւններուն դէմ. այսուհետև իւր նախարարութիւնը դուցէ նորէն ապահովի և տակաւին երկար ժամանակ տևէ։

Անգղիոյ դեսպերուն Ռուսիոյ մէջ ըրած աղդեցութեան դալով, սխալ է կարծել թէ Ռուսիա կը նախանձի Անգղիոյ յաղթութեանց և Անգղիացիներն Հնդկաստանէն վանել կուզէ։ Ընդհակառակն՝ Բեդրսպուրգի պաշտօնական թերթերն և միջազգային իրաւագիտութեան դասատու անուանի Պ. Մարթէնս՝ իրենց յօդուածներով և հրատարակութիւններով միշտ կը յայտարարեն թէ քաղաքակրթութեան շահերը կը պահանջեն որ երկու տէրութիւնք Ասիոյ մէջ բարեկամ և դաշնակից լինին, թէ վայրենի ցեղերն անկախ պահել և ըստ 1869ի համաձայնութեան Աֆղանիստանը չեղոք երկիր մ'ընել անկարելի է, թէ երկու տէրութիւնք պէտք է յառաջ երթան և իրարու սահմանակից լինելէ բնաւ չ'վախնան, քանզի ինչպէս Եւրոպիոյ՝ նոյնպէս և այն ժամանակ Ասիոյ մէջ քաղաքակրթութիւնն և միջազգային իրաւունքը կը տիրեն, չնորհիւ երկու մեծ տէրութեանց սահմանակցութեան, ուստի պէտք է որ Անգղիոյ պետական մարդիկ իրենց նախանձն ի բաց թողուն Ռուսիոյ նկատմամբ, և անկեղծ կերպիւ այս աշխարհավարութիւնն ընդունին։ Հաւանական է ուրեմն որ Ռուսիա ալ Թէքքէի աւարառու Թիւրքմէնները պատժելով մինչև Աֆղանստանի սահմանն հասնի, և երկու տէրութիւնք իրենց ազդեցութեան սահմանները բաժնեն։

Իսկ Անգղիոյ դալով, Լորտ Պիքոնսֆիլտ արդէն յայտարարած էր թէ Ասիա բաւական ընդարձակ է թէ՛ Ռուսիոյ և թէ՛ Անգղիոյ համար, և Անգղիոյ ամենէն կարևոր թերթը՝ Թայմզ՝ կը խոստովանի թէ քանի որ 1869ի աշխարհավարութիւնն անյաջող երևնալով Աֆղանստան չկրցաւ չեղոք երկիր մը լինիլ, երկու տէրութեանց սահմանակցութիւնն աւելի օգտակար պիտի լինի։ Բայց արդեօք ապագային մէջ իրենց մէջ վէճ չպիտի՞ ծագի.—թէ և այս դուշակել անկարելի է, բայց մինչև հիմա եղած փորձը ցոյց տուաւ որ այս վէճերն ու բողոքները դրչի ասպարէզէն անդին չանցան և միշտ համաձայնութեան յանդեցան։ Ապագային մէջ ևս այս աշխարհավարութիւնն աւելի հաւանական կը թուի։

• •

Կերևի թէ Կարսի մէջ Ֆրանքլինի զօրավարին Հայոց դպրոցներուն դէմ ձեռք առած բռնական միջոցը վերջնական չէ, և 'ի մտոյ այս գործն որ և է կարգադրութիւն մը պիտի կըընայ ստանալ։ Բեդրսպուրգէն հոկտ. 9 թուով Անգղիական լրագրաց քաշուած հեռագիր մը կը ծանուցանէ թէ "Կարսի մէջ Ռուսական իշխանութեանց Հայոց դպրոցները դոյելու "գործն այժմ քննութեան առարկայ "եղած է։ Ջեռնհասութեան վկայականներ պիտի պահանջուին ուսուցիչներէն և Թուրքական վկայականք "անընդունելի պիտի նկատուին։"

Այս հեռագրին վերջին մասին մէջ սխալ մը կը նշմարեմք. Թուրքիոյ մէջ Հայ դասատարակք և դասատուք կառավարութենէն վկայական չեն ստանար, և հետևաբար տարակոյս չկայ որ Կարսի դաւառին Հայ վարժապետներն ալ չեն կրնար Թուրքական վկայականներ ունենալ։ Ուստի, կը թուի թէ հեռագիրն Հայ վարժապետներու դպրոցական հոգաբարձութեանց կամ ծնօրէնութեանց կողմէ ստացած վկայականներն ակնարկել կուզէ, որք ընդունելի չպիտի լինին եղեր Ռուսական կառավարութեան կողմանէ, յորմէ կը հետևի թէ Կարսի Հայ դպրոցաց ապագայ վարժապետները Ռուսիոյ կառավարական դպրոցաց մէջ ուսում առած և "ձեռնհասութեան վկայական" ստացած անձինք պիտի լինին։ Ինչպէս կը տեսնուի, խնդրոյն ըստանալիք հաւանական լուծումն ալ գոհացուցիչ բան մը չէ, և մեր Կարսի ազգայնոց խոհեմութեան ու արիութեան մեծ պէտք կայ։

Աւելորդ է ըսել թէ Կարսի Հայկական դպրոցաց զոյութիւը զէնք մ'եղած է անոնց ձեռք, որք՝ մեղ պէս՝ հաստատած են միշտ թէ քրիստոնէից պաշտպանութիւնը պատրուակ մ'էր Ռուսիոյ ձեռք, որ զայն իւր դաղանի դիտաւորութեանց և երկրակալական շահուց համար՝ 'ի հարկին իբր քօղ կամ իբր փոհան դործածած է։ Այս նկատմամբ Անգղիական Տէյլի Թելէկրաֆ լրագիրն հետևեալ հեգնական դիտողութիւնները կընէ։

"Քրիստոնէից համար Ռուսիոյ ունեցած հոգածութեան աչքի զարնող մէկ օրինակը կը տեսնուի վերջերս եղած այն հրամանաւ, որ Կարսի մէջ Հայոց բոլոր դպրոցները կը դոցէ։ Իրողութիւնն այն չէ թէ Ռուսք մոլեռանդ են կամ կը մտնան թէ Փոքը—Ասիա արշաւելնուն պատճառներէն մին էր Հայ քրիստոնեայներն օտար կրօնքի մը լուծէն ազատել։ Բայց կը վախնան որ դպրոցաց մէջ ինչ ինչ հերետիկոսութիւններ կաւանդուին, որք կրնան Ընատօլուի փոքրիկ տըղայոց և աղջկանց ապագայ բարեկեցութիւնը վտանգի մէջ դնել։ Այդմանկանց հոգևոր անդորրութեան համար ա՛յնքան հոգ կըտանին (Ռուսք), որ ճնասակար բաներէն մինչև որ ազնոց դաւանութիւնը չմաքրեն, թող չպիտի տան որ յիշեալ մանկտին դայն ունենի։ Ռուսք այդ տղայոց կրօնավոխութիւնը չեն ուզեր. իրենց միակ վախնալն է զանոնք 'ի ճշմարտութիւն առաջնորդել ազնուապէս։ Սակայն իրենց օգտին համար ցուցուած բոլոր այս հոգածութեան և բարերարութեան հակառակ, Հայք ա՛յնքան անվայել կերպիւ ապերախտ կը դտնուին իրենց ազատարարաց դէմ, որ արտունչ կը բառնան, վախ կը յայտնեն թէ իրենց լեզուն ալ հաւանականաբար մօտ ժամանակէն ազդային հաւատոյ բազդը պիտի ունենայ։ Բարեբաղդաբար, Զարին կառավարութիւնը թող չպիտի տայ Հայոց, որ գանդատելէ աւելի բան մ'ընեն, և մինչև անդամ չատ չանցած՝ միջոցներ ձեռք պիտի առնու որ չափէն աւելի չարտանջեն։ Սակայն, լաւ է 'ի նկատ առնուլ այն հայրական մտածութիւններն, որք ազատութեան ախոյեան Մոսքոֆներուն բոլոր գործոց մէջ կը տեսնուին։ Նոքա ո՛չ միայն դրացեաց հողն իրենց լաւ կառավարեալ և գոհ բնակիչներ ունեցող տէրութեան երկիրներուն հետ կը միացնեն, այլ և այդ հողին բնակիչներն իրենց եկեղեցւոյն մէջ կընդունին, —թէ կամաւ լինի և թէ ակամայ։"

• •

Զուլուներու նախորդ թագաւոր Սեթեվայոյի համար Անգղիացիք նոր Ս.Հելենէ մը չկրցին տակաւին որոշել, և հռչակաւոր դերին առ այժմ Բար—Թաուն (Բարեյուսոյ քաղաքը) կը մնայ*։ Սեթեվայո, որ դերի իյնալէն ի վեր Եւրոպական հագուստ հագնելու դիջումն ըրած է, Լոնտրան տեսնելու և Բրիտանական դօրաթիւնը մօտէն ուսանելու փափաք յայտնեց։ Այս Ափրիկեան բռնապետն, որ իւր իշխանութեան ժամանակ՝ իրենց նիզակը թշնամւոյ մ'արեան մէջ չլուացած Զուլու երիտասարդաց տրտունութիւն չէր տար ա-

* Որ Ռիկրմ Հարքօրթ իւր վերջին բանախօսութիւններէն միոյն մէջ Զուլուի պատերազմին վրայ խօսելով ըսաւ թէ Վաթերլոյի դաշտին վրայ Առաջին Նաբուլէոնի դէմ գործածուած Անգղիական զօրաց չափ զօրք գործածած է Անգղիոյ կառավարութիւնը Սեթեվայոյի դէմ։
Ծ. Խ.

մուտնանալու, այժմ քաղաքակրթութեան բարիքներն ընդունելու մեծ տրամադրութիւն կը ցուցնէ։ — դժբաղդութիւնն՝ որ Ս. Հեղինէ կը ղրկուին մէջ իւր սխալները ճանչցուցած էր Մեծին Նաբոլէոնի, այժմ Սէթիվաօի թերութիւններն իրեն կը ճանչցնէ։ Զուլուներուն նախորդ թագաւորը չկարծեր որ Սը կարնէթ Ուօլլի զօրավարին կողմանէ Զուլուստանայ տրուած կազմակերպութիւնն Անգղիական շահուց համար տպահովութեան բոլոր տարրերն ունենայ, և պատասխանատուութիւնն իւր վրայ առնլով խօսք կուտայ թէ Զուլուներն իւր (Սէթիվայօի) անօրէնութեան ներքև քիչ ժամանակէն կրնան մեծամեծ աշխատութեանց ձեռնարկել, քաղաքներ շինել, ուղիներ գծել, կրթութեան բարիքն ընդունիլ, և։ Բայց այս արդիւնքը ձեռք բերելու համար՝ Սէթիվայօ կ'ըսէ թէ հարկ անհրաժեշտ է որ ինք Անգղիա այցելութիւն ըրած միջոցին Զուլուներուն գլխաւոր ցեղապետներէն մի քանին իւր հետ դան։ Յայտնի է թէ մեծին Նաբոլէոնի անունը Զուլուներուն անծանօթ չէր։ որովհետև ժամանակաւ տիեզերահռչակ կայսեր սպայներէն մին Զուլուներուն երկրին մօտ ցամաք ինկած լինելով, զինուորական կրթութիւն տուած էր անոնց։ Սէթիվայօ Լուի Նաբոլէոն իշխանին մահուան վրայ յաճախ խորին ցաւ յայտներ և և մինչև իսկ յայտարարեր է որ եթէ իշխանն ինքզինք ճանչցուցած, կամ դոնէ «Նաբոլէոն» անունն արտասանած լինէր, Զուլուներն սաուդիւ չէին զարներ զինք։ Զմտնամք յիշել նաև թէ Սէթիվայօ իւր հօր խրատուց հակառակ Անգղիացւոց դէմ պատերազմ ըրած լինելուն համար ալ մեծ ցաւ յայտնած է Բաբ–թաունի մէջ։

•

Անտրաչի կոմսին տեղ, Աւստրո—Հունգարիոյ արտաքին գործոց՝ ինչպէս նաև կայսերական տան նախարար և Աւստրօ–Հունգարական նախարարաց խորհրդոյ նախագահ անուանեալ Գարոն Տը Հայմէրլէ 1828 դեկտ. 7ին Վիէննա ծնած էր, և հետևաբար 51 տարեկան է այժմ։ 1850ին կ. Պոլսոյ Աւստրիական դեսպանատան ուսանող–թարգման էր, և Խրիմեա պատերազմին ժամանակ՝ յիշեալ դեսպանատան կողմանէ պաշտօն մ'ունէր հռչակաւոր ոսպարապետ Լօմէր փաշայի քով։ 1857ին Աթէնքի դեսպանատան քարտուղար անուանեցաւ, և ուրիշ քանի մը պաշտօններ վարելէ ետև՝ 1864ին Տանիմարքայի Քօբէնհակ քաղաքին համար Աւստրիական գործակատար անուանեցաւ։ 1868ին կ. Պոլիս վերադարձաւ դեսպանատան առաջին քարտուղարի պաշտօնով, և Բրօքէշ–Օսթէն կոմսին բացակայութեան միջոցին գործակատարի պաշտօն վարեց։ 1869ին Աթէնքի և 1872ին Լա Հէյի դեսպան եղաւ, և 1876ին Ֆրանչիսկոս Յովսէփ կայսրը Գարոնի աստիճանաւ զինք Հռոմի դեսպան անուանեց։ Գարոն Տը Հայմէրլէ անցեալ տարի Պէրլինի վեհաժողովին մէջ Աւստրօ–Հունգարական երրորդ պատուիրակ էր, և դիւանագիտական մեծ հմտութիւն ցուցուց այդ առթիւ։ Կըսուի թէ Աւստրօ–Հունգարիոյ արտաքին գործոց նորընտիր նախարարը տան լեղու կը խօսի և կը գրէ։

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Լոնտրա, 18 հոկտ.

Թոյմզ և ուրիշ քանի մը լրագիրք կը պնդեն որպէս զի Սբը Հէնրի Լէյբրա Փոքր–Ասիոյ մէջ բարենորոգմանց հարկն յայտնէ Վ. Ն. Սուլթանին, ուր Ն. Վսեմութիւնն իւր ուղևորութեան միջոցին առիթ ունեցաւ տեսնել կեցող և չարունակող դեղձումները։

Գահիրէ 18 հոկտ.

Եգիպտոսի արտաքին գործոց նախարարը գաւառաց փաշաներուն հրաման ղրկեց որ անմիջապէս հատուցանեն անվճար մնացած տուրքերն, որոց գումարը 300,000 Անգղ. ոսկւոյ կը հասնի։

Պուքրէշ 17 հոկտ.

Երեսփոխանական ժողովը Հրէից խնդրոյն վրայ վիճաբանութիւնը կը շարունակէ։

Այս առաւօտ հեռագիր

Վիէննա 18 հոկտ.

Այն չրջաբերականն, որով Պ. Տը Հայմէրլէ Անտրաչի կոմսին հրաժարիլը և իւր պաշտօնի անցնիլը կը ծանուցանէ, կըսէ թէ այս իրողութիւնն Աւստրիոյ աշխարհավարութեան մէջ որ և է փոփոխութիւն մը չնշանակեր, և թէ Արևելից նը-կատմամբ ինք (Պ. Հայմէրլէ) արդի աշխարհավարութիւնն ամրապնդել պիտի ջանայ։

Պուքրէշ 18 հոկտ.

Երեսփոխանաց ժողովը 9 ձայնի և 2 ձեռնպահութեանց դէմ 133 ձայնիւ ընդունեց Հրէական խնդրոյն լուծման ծրագիրն, զոր յանձնախումբն և կառավարութիւնը բարեփոխած և ընդունած էին։

Լոնտրա 19 հոկտ.

Սիմլայէն կը հեռագրեն. — Էմիր Եաղուպ խան ծանոյց թէ իշխանութենէ կը հրաժարի՝ հակառակ Ռոպէրթս զօրավարին ջանից՝ որ ի զուր աշխատեցաւ իւր որոշումէն ետ կեցնել Էմիրն։ Ռոպէրթս զօրավարն անմիջապէս առ ժամանակեայ միջոցներ ձեռք առաւ բարեկարգութիւնն պահպանելու և վարչութիւնը չարունակելու համար։

Մատրիտ, 19 հոկտ.

Միւրչիոյ գաւառին ողողմանց պատճառաւ հինգ հարիւրի չափ մարդ մեռան. եղած վնասներն երսուն միլիոն Ֆրանքի կը հասնին։

Լոնտրա, 20 հոկտ.

Տէյլի Նիւզ կը հաստատէ թէ Հընդկաստանի կառավարութիւնն անմիջապէս մինչև Գանտահար երկաթուղւոյ մը շինութեան ձեռք զարնելու և պէտք եղած նիւթերը դնելու հրաման տուեր է։

Տէյլի Թէլէկրաֆ կը կարծէ զիտնալ թէ ընդհանուր համաձայնութեան մը հաստատութեան նկատմամբ Անգղիոյ, Գերմանիոյ և Աւստրիոյ միջև հաւատաց փոխանակութիւն մը տեղի ունեցած է։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Շաբաթ օրն իրիկուան դէմ նախարարական կարևոր փոփոխութիւնք կատարեցան։ Ըստ Կայսերական խաթթին, «Արիֆի փաշայի պաշտօնանկութիւնը հարկաւոր» դատուած լինելով, դատական նախարար Բարձր. Սայիտ բաշան առաջին նախարար (Պաշ–Վէքիլ) անուանեցաւ։

Նախորդ Առաջին նախարար Արիֆի փաշան Պետական խորհրդոյ նախագահ անուանեցաւ։

Նախկին Մեծ–Եպարքոս Բարձր. Մահմուտ Նէտիմ փաշան ներքին գործոց նախարար անուանեցաւ փոխանակ Գատրի փաշայի, որ առևտրական երկրագործական և անտառաց ու հանքաց միացեալ պաշտօնատան նախարար անուանեցաւ։

Արտաքին գործոց նախարարութեան խորհրդական Սավա փաշա Արտաքին գործոց նախարար անուանեցաւ փոխանակ Բարձր. Սաֆվէթ փաշայի, որ Պաշտօնարանաց քննիչ (Տէվայիր Միւֆէթթիշի) անուանեցաւ։ Այս պաշտօնը նոր հաստատուած է և նպատակ ունի տէրութեան պաշտօնարանաց վիճակը քննել և հարկ տեսնուած բարեկարգումները քննութեանց արդիւնքին հետ վեհ. Սուլթանին ներկայացնել։

Առևտրական նախարար ՃԷվտէթ փաշա Դատական նախարար անուանեցաւ փոխանակ Բարձր. Սայիտ փաշայի։

Իսպրահիմ Լտիպ էֆէնտին երմտական նախարար փոխանակ Զիւհտի էֆէնտիի, և Սիւլէյմ փաշան Լվդաֆի նախարար անուանեցան։

Կայսերական խաթթին ուրիշ կարևոր մտերամտութիւն չպարունակեր։

Շաբաթ օրը Թուրքօ–Հելլենական յանձնախումբն իւր վերջերորդ նիստն ըրաւ, որ դարձեալ արդիւնք մը չունեցաւ։ ԺԳ. ատենադրութեան մեկնութեան գործը մէջ տեղէն վերցած լինելով, որոշուելիք սահմանադլխին վրայ երկու կողմէն միոյն իւր կարծիքն յայտնել հարկ էր։ Հելլէն պատուիրակք կըսէին թէ Օսմանեան պատուիրակաց կիյնայ նախ իրենց կարծիքն յայտնել, իսկ Օսմանեան պատուիրակք հակառակը պնդելով կը յայտարարէին թէ նախ Հելլէն պատուիրակք խօսք պէտք է առնուն։ Հետևաբար նիստը վերցաւ՝ այսօր եօթներորդ անգամ դումարուելու որոշմամբ, յորում պիտի որոշուի թէ նախ ո՞ր կողմը պէտք է խօսք առնու։

Այս առաւօտեան Թուրք լրագիրք կըսեն թէ արտաքին գործոց նորընտիր նախարարը Սավա փաշան դեսպաններն ընդունելուն պատճառաւ, Թուրքօ–Հելլենական յանձնախումբին եօթներորդ նիստն ետ մընացած է։

Վադրթ կըսէ թէ մայրաքաղաքիս Ռուսական դեսպանատան եկած լրոյց նայելով, Սէլանիկի Ռուսական հիւպատոսն, որուն եղած թշնամանքը «Սէլանիկի խնդրոյն» ծնունդ տրուած էր, անցեալ չորեքշաբթի օրն օրն յանկարծամահ եղեր է։

Թօքհանէի մէջ մինչև ցարդ կըսրելով ոչնչացած հին պղինձ դրամին գումարը մէկ ու կէս միլիոն դրուշի հասած է, ըստ Թուրք լրագրոյ։

Սոսյդ տեղեկութեանց նայելով, նորընտիր խրատով թէվֆիդ փաշային Վ.Հ. Սուլթանին ներկայանալու համար կ. Պոլիս դալն առ այժմ ետ մընացած է Գաղղիոյ և Անգղիոյ դիտողութեանց պատճառաւ, որք կը փափաքին որ ամէն բանէ առաջ Եդիպտոսի գործերը կարգի դրուին։

Մօնիթէօր տիւ Քօմէրս լրագիրն իւր շաբաթ աւուր թուոյն մէջ հետևեալ տեղեկութիւնները կը հրատարակէ.

«Երէկուընէ ի վեր ղրոյց կը պըտըտի թէ Գաղղիա և Անգղիա իրենց կ. Պոլսոյ դեսպանաց միջոցաւ բաղքեր են ներքին փոխառութեան մը կնքուելուն դէմ։ Մեր տեղեկութեանց նայելով, այս ղրոյցն անհիմն է. և նախ՝ Անգղիա՝ մեր դիտցածին նայելով, սպասողական և մինչև իսկ չեղոք ընթացք մը կը բռնէ Բ. Դրան ներկայացած այլ և այլ ելմտական ծրագրաց վրայ եղած բանակցութեանց մէջ։ Իսկ Գաղղիական դիւանագիտութեան համար այսպէս չը կրնար ըսուիլ։ Այս վերջինը ծրագիր մ'ունի, որուն յաջողութիւնը տեսնել կուզէ։ Յայտնի է որ այդ ծրագրին ընդունուելուն հակառակող կէտն է օտար միջամտութիւն ներմուծելու խնդիրն։ Ուստի, եթէ մեր յիշած ղրոյցին մէջ ճշմարիտ կէտ մը կայ, այնպէս սա է թէ Գաղղիական դիւանագիտութիւնը չուզեր որ իւր ծրագրին դէմ մրցող ծրագիրն ընդունուի։»

Օսմանեան Պանքային Ղալաթիոյ կեդրոնատեղւոյն և Պօլսոյ ճիւղին միջև թէլէֆոն մը հաստատուեցաւ։

Մայրաքաղաքիս Լա–Սէլամ անուն Արաբ թերթը՝ Վսեմ. Աբրահամ փաշային հրաժարման վրայ խօսելով՝ կ'ըսէ թէ ասոր պատճառը նախորդ խաթիվ Իսմայիլ փաշային համար կ. Պոլիս դալու արտօնութիւն ձեռք բերելու մասին Ն. Վսեմութեան ըրած ջանից ի դերև ելնելն էր։ Եթէ Լա Սէլամի լուրը ճշմարիտ է, կ'ըսէ Մօնիթէօր, Աբրահամ փաշան դըժուար գործի մը ձեռք զարկած էր, որովհետև առ նուազն երկու մեծ տէրութեանց բոլոր ազդեցութիւններն իւր դէմ էին այս մասին։

Մայրաքաղաքիս մէջ դողութիւնք ժամանակէ մ'ի վեր այնքան շատցած են, որ մինչև իսկ ցերեկ ժամանակ ամայի փողոցներէ անցնիլը վտանգաւոր եղած է։

Ուրբաթ օրն ազգային ժողովին երթալու համար Պատրիարքարանի մօտ թաւշան–թաշը կոչուած փողոցէն վար իջած ժամանակնիս, ծովային զինուորի կերպարանօք երեք մարդ մեզ շրջապատելով կողոպտելու փորձ փորձեցին, բայց ընդդիմացանք, և բարեբաղդաբար նոյն միջոցին փողոցին ղվարի և վերի ծայրերէն քանի մ'անցորդ երևան ելնելով, յաջողեցանք ազատիլ։

Քիչ մ'անդին իմացանք որ ուրիշ Հայազգի մ'ալ կողոպտելու փորձ փորձեր են, բայց դարձեալ չեն յաջողեր։

Պուքրէշէն եկած հեռագիր մը կը ծանուցանէ թէ Ռումանիոյ կրօնական գործոց նախարարին առաջարկութեան վրայ, որուն հաւանութիւն տուեր է Ռումանիական նախարարաց խորհուրդը, Կարոլոս իշխանն հրաման ըրեր է որ Պապատոլի (Տօպրուճա) մեծ մզկիթին անմիջապէս վերանորոգի, և Տօպրուճայի միւս մզկիթներուն պիտոյից համար պէտք եղած դումարները վճարուին։

Այս առաւօտ ժամը 12ին միջոցները Ունդարանի դրան ներսի կողմը Քիւչիւք–Բազար ըսուած տեղէն հրդեհ ելնելով, հիւսիսային հովին ուժգնութեան պատճառաւ առաջը չկրցաւ առնուիլ, և Գոլաճիներու ու Սէփէթճիներուն շուկաներէն սկսեալ՝ մինչև Այազմատաբուի դուռը գտնուած բոլոր խանութներն ու շէնքերը մնիսիր դարձուց, 4 ժամը շարունակ այրելով։

ԱՂԳԱՅԻՆ

Դպրոցասիրաց Արևելեան ընկերութեան Տնօրէն խորհուրդը կը խնդրէ մեզմէ ծանուցանել 'ի գիտութիւն և 'ի բերկրութիւն համայն ազգայնոց և անդամոց, թէ ընկերութեան Բաղէշի վարժարանին բացումը տեղի ունեցեր է ամսոյս 1ին։

Մեր Տփխիսեցի նշանաւոր ազգայիններէն Մեծ. Տօքթէօր Իսահակ Թամամշեանց ճարտար բժիշկն, որ տասն տարիէ ի վեր Եւրոպա ճանապարհորդած է ուսումնական նպատակաւ, և Գերմաներէն ու Գաղղիերէն լեզուաւ մասնագրութիւններ ալ հրատարակած, մայրաքաղաքիս Ռուսական դեսպանատան և Հիւանդանոցին բժշկապետ անուանած լինելով կ. Պոլիս եկած է։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐՈՑ

25 սեպտ. 1879 ի Բաղէշ

. . . Տէր Խմբագիր Մասիս պատուական լրագրոյ,

Հետևեալ հարցասահարական նամակ, որ Բաղիշոյ Ազգ. ժողով գրկած է ի Պատրիարքարան, ճիշդ պատճէնն Ձեզ կը ղրկեմք յուսալով որ պատուական թերթերուդ միոյն մէջ հիւրընկալելու շնորհ կը նէք ազգասիրաբար։

Այս վերջոցներս Մօտկանցի Քիւրդեր առաջին տարիներէն աւելի վատթարացած են, և իրենց չար սովորութեան համեմատ կը հարցասահարեն տեղացի ոչ զրկելի Հայք, և ճանապարհի անցքեր կտրելով կը կողոպտեն վաճառականաց կարաւաններն ու հասարակ ճանապարհորդները, ինչպէս որ Ս. Կարապետի ուխտաւորներ և մեծ կարաւան մ'օրերս կողոպտեցին, քաղաքէս ճիշդ երկու ժամ հեռու. գողերն ալ թէ և ձերբակալուեցան, բայց յետ չորսօրեայ բանտարկութեան առանց պարտիք և տուգանքի արձակուեցան, ի շնորհս ոսկիին։

Իրաւ է, Միրզայ պէյ երկու վաշտ զօրքով Մօտկան գնացած է, և ինքն Գայմագամ անուանուած է, սակայն առանք մինչ ցայսօր Քիւրդի մը գէշ բան մ'անդամ չեն ըսած. Քիւրդեր զօրաց այս անհոգութենէն օգուտ քաղելով, աւելի գէշութիւններ ընելու ձեռնարկութիւններ ըրին. տեղացի Հայք արդէն ստիպուած են ամեն տարի Խաւիրայ կոչուած տուրք վճարել Քրդաց, իսկ այս տարի սովորութենէն տարբեր կը պահանջուի, այսինքն ամեն մարդէն մէկ մէկ Օսմ. լիրա։ և չտուողներէն գանակոծութեամբ, հայհոյանօք, և խայտառակութեամբ կ'առնուի։ Զօրքեր այս բոլոր դարձուածներուն ականատես են, բայց անտարբեր կը մնան, Հայոց այս տարուան ամբողջ բերք ասոնց որովայնին ծառայեց։

Հայք երեք կըլլայ որ դաղթելու փորձեր կընեն, առաջինին արդիլեցինք, ինչպէս տեղեկագրած եմք Բարձր Սրբազնութեանդ, երկրորդ անգամին Անդիական վանայ փոխ հիւպատոս Վսեմ. Պ. Ե. Քլէյթըն տեղս ներկայ գանուելով, ապագայի բարեկարգութեանց յուսով արգիլեց. իսկ այս անգամ մտադիր են խպառ դաղթել. . . ։

Մինչդեռ Միրզայ պէյի նման հրաշակաւոր բարբարոս մը Գայմագամութեան պաշտօն կը վարէ, ի՞նչ կարելի է բարեկարգութիւն յուսալ. «Փուչերէն խաղող կամ տատասկէն թուզ կը քաղուի՞»...։

Զարմանօք կարդացինք Մասիս լրագրոյ, 2374 թիւ թերթով հետևեալ տողերը.

«Միւս կողմէն Վանայ վիլայէթէն քանի մը ցեղերն, ինչպէս Մօտկանք եւ որք երբեմն չէին ուզած տրոց հաւաքիչներ ընդունիլ, յայտնեցին թէ կայսերական կառավարութեան ամեն պահանջները գոհացնելու յօժար և պատրաստ են։ *»

Տակաւին Մօտկանու վիճակ այսպէս ըլլալով, լրագրոց միջոցաւ այս բաներ կարդալ ի՞նչ պիտի ըլլայ չեմք գիտեր։

Աջքցի կոչուած վրանարնակ Քիւրդերը, որ Բ. Դռնէն խստիւ արդիլուած են մեր վիճակին մէջ գալու. կառավարութեան թոյլտութեամբ այս տարի կըրկին եկած, և Կիւզլ—Տէրէյի սահմանները վրաններ կանգնեցուցած են. թէ ասոնք ո՛րչափ վնաս և նեղութիւն կը հասցնեն գիւղացի Հայոց, անհնար է՝ մեզ նկարագրել, բողոքեցինք, բայց ո՞վ լսող։

Տատակու Քիւրդերը կը հարցասահարեն և կը կեղեքեն տեղւոյն Հայերը. այս Քրդերէն ամանց գէմ բողոքեցինք և ձերբակալել տուինք, բայց քանի մ'օր բանտ կենալէն եաև ոսկիով արձակուեցան. որչափ բերանացի և թղթերներով բողոքեցինք, մեր ձայնը անլսելի կը մնայ, գի ոսկիի առջև ազքատին իրաւունք կը գոհուի։

Նահեցի կոչուած Քիւրդերը ամեն որ Ղուլթիք գալով Հայոց ապառնալիք կը կարդան, որպէսզի հանրագիր տան իրենց բանտարկեալները Մուշէն արձակելու համար, և երբ Հայք չեն տար, մեծամեծ գնաններ կը կրեն, և արդէն, ինչպէս կ'լսեմք, Մշոյ կառավարութիւնը խիստ տարտամ և թոյլ վիճակի մէջ է, և տեղէս ղրկուած բանտարկեալք կըսուի թէ արձակուեր են, որոյ համար կը դողամք, որովհետև եթէ Ցարսօն արձակուի, Ղուլթիք որ 400 տունէ բաղկացեալ գիւղ Հայ մ'է՝ բոլորն ալ դաղթելու պիտի ըսուին յակամայից։

Բուն քաղաքիս մէջ ալ ամեն օր ու ժամ դէպութիւններ կը պատահին, Հայք չեն համարձակիր Տաճկաց հետ բարձր խօսելու անդամ. տեղական կառավարութիւն անտարբեր կ'մնայ. դատաւորնիս կաշառակեր և մոլեռանդ մէկն ըլլալով ոճրագործք երրէք չեն բանտարկուիր 'ի շնորհս ոսկիին, քանիցս ասոր յոռի ընթացքին գէմ բողոքեցինք թէ վան, և թէ 'ի Մուշ. բայց մեր ձայնին լսող մը չեղաւ։

Անհատական մեր դարապատում վիճակի պատկեր, որոյ վրայ Ձեր Սրբազնութեան շնորհիւ Բ. Դրան գթութիւնն և ուշադրութիւն կը հայցեմք. մինչդեռ քաղաքացի Հայք և իրենց չբնակոյ գիւղօրէք երբէք բարեկարգութեան նշոյլ մը տեսած չեն, ի՞նչպէս լրագրքը 'ի յականջս աշխարհի կը պոռան, թէ Մօտկանու պէս լեռնային, բարբարոս, և խպա՞ռ Հայութեան ոխերիմ Քիւրդեր, Տէրութեան օրինաց հնազանդած են. ա՜ռ՜ գ, մինչև ցե՞րբ բարեկարգութիւն թուղթերու վրայ նըկարուած տեսնամք, խարուի՞մք, և քանդուիմք. . . ։

Կաղաչեմք յերեսս անկեալ, սրբազան Տէր, որ մեր բողոքին ազգասիրաբար լսելով, պարտ ու պատշաճ անօրէնութեան հալածէպ շնորհ բերէք, որպէս զի Մօտկան և այլ ուրեք բարեկարգեալ են ըսելով, չըլլայ թէ Հայուն հինցած վերքեր անդարման մնալով, յետինն քան դառաջին չարագուշակ ըլլայ։

Ցաորագրութիւնք

Մուշէն հետևեալը կը գրեն մեզ.

«Սուրբ Կարապետի վանուց ուխտաւորաց մասին Գեր. վանահօր բողոքներուն վրայ Ամեն. Ս. Պատրիարք Հօր ձեռք առած ազդու միջոցներու շնորհիւ և բարեսիրտ հազարապետ Ահմէտ Հիլմի և Մուսային Նորատունկեան Թաղէոս էֆէնտիներու ջանիւք մինչև հիմայ ուխտաւորներէն 885 հատ գլուխ ոչխար, 32 տուար, 4 ուռնակ և 14 հազար ղրուշ դրամ, ինչպէս և Կնճանի բարբարոս Իսմայիլ պէյին. վանքէն տրուած ընծաներն ետ առնուած և վանքին յանձուած է. չարագործ Իսմայիլ պէյն ալ ձերբակալելով Տիգրանակերտ տարեր են, իսկ միւսներն փախեր են. միայն երեք գործք և վանքին միարաններէն ներքին տեսուչ Արժ. Մեսրոպը վարդապետ և երկու գործակալ կը մնան հոն մնացորդներն հաւաքելու և մինչև 60ի չափ ոչխար ալ կը հաւաքեն։ Սակայն «Դմիկ» քրդերն երբ հազարապետին և գօրաց Կինճէն Տիգրանակերտ քաշուելնին կը լսեն, յիշեալ 60 ոչխարն նորէն կուգան վանքի մարդոց առջևէն կը զարնեն ու կը տանին։

«Կը յայտնեն նաև որ եթէ նոր ձերբակալուած Իսմայիլ պէյն և ի վաղուց ի Մուշ բանտարկեալ Օսմանն' իրենց տեղերէն հանդերձ վանքի շուրջէն չվերցուին, վանքն ապագայ վտանգներէ զերծ չկրնար մնալ երբէք։»

. . . Խմբագիր էֆէնտի,

Սեպտ. ամսոյ մէջ նուիրատուութեանց ցանկը հրատարակելով կը փութամք հաղարարձութեան շնորհակալիքը մատուցանել անոնց, որք բարեհաճեցան իրենց նպաստաբեր օժանդակել Ազգ. Հիւանդանոցի ծախուց։

Ամեն. Գեր. Մկրտիչ Սրբազան Խըրիմեան նուիրեց սրբանոցի թանգարանին, Գիրք Սիրաք և Սամուէլի հատ 20, Թորոս Ախպար հատ 2 Ա. մաս. Հայրենասիրութիւն Հայոց հատ 3։

Մեծ. էֆէնտիք,	Լ. 0.
Բարսեղ Հալաճեան	25
Թրամվայի Երկաթուղւոյ ընկե.	25
Գէորգ Ազատեան	1
Կարապետ Էնկիւրցի՝ ձեռամբ Խաչատուրեան Մկրտչի	5
Ցարութիւն Թադեորեան Մէջ. գրչ	60
Սեդրաք Սափրիչ »	40
Ստեփան Կիւրեղեան	20
Սաղաթիել Գրիգորեան	25
Աւետիս Սամուէլեան	20
Եղիազարի արհեստաւորք	60
Կէյվէյի Գրիգոր	20
Մանուկ Աւետիսեան	10
Ոմն	40

» Բանավաչ Թոմ 1

1879 հոկտ. 7 Մնամք . . .

Գրսկ. Ազգ. Հիւ. Ի դիմաց Հիւ. Հոգ.

Ատենադպիր Ատենապետ

Տ. Նիւ-Գ-Հէրեան Մէյ-ոյել Ցակոբեան

Կ. Պոլիս, 6 հոկտ. 1379

. . . Խմբագրապետ Տէր,

Գեր. Խորէն սրբազան Արքեպիսկոպոս Նար-Պէյ Լուսինեան Մասկուա գտնուած ժամանակ նպաստ ընդունած 835 բուպլիի գումարը նուիրեց ազգային Մատենադարանի ընկերութեան։

Ազգ. Մատենադարանի ընկերութեան Տնօրէն ժողովն իւր խորին շնորհակալութիւնը հրապարակաւ կը յայտնէ առ Նորին Գերապատուութիւն, և կը փափաքի որ և այլ բարեսէր ազգայինք հետևելով ազգասէր Սրբազանին գեղեցիկ օրինակին, բարեհաճին նպաստել 'ի բարգաւաճումն ազգային Մատենադարանիս, որոյ նպատակն է ամբարել ընտիր մատեաններ և գրչագրեր, և ընթերցանութիւնը դիւրացնել Հայ հասարակութեան։

Գնձապ. Ազգ. մատենադրնին. Հայոց

Սարգիս Եաղլէրեան

. . . Խմբագիր Տէր,

Կը խնդրեմք Ձեր մեծապատուութենէն, որ հետևեալ պաշտօնական ծանուցումը ազդօգուտ լրագրոյդ մի անկիւնը զետեղելու. շնորհ ընէք, ընդունելով կանխաւ մեր շնորհակալեաց։

Ի Դիմաց Հիմնադիր խորհրդոյ

Ատենադպիր Ատենապետ

Մ. Մ. Դանիէլեան Յ. Շ—ուշ

22 Սեպտ. 1879

Ընկ. վարժ. Երիզայի

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ԸՆԿ. ՎԱՐԺԱՐԱՆԻ ԵՐԻԶԱՅԻ

Երիզայէն և Արապկիրէն հետզհետէ Հայրենիք և Մասիս լրագրոց մէջ երևցող մի քանի յօդուածագիրներ Ընկ. վարժարանի և իւր տեսչին նկատմամբ այլ և այլ ակնարկութիւններ ըրած էին։

Ընկ. վարժարանի Հիմն. խորհուրդը սոյն յայտարարութեամբ հարկ կը համարի ծանուցանել որ համամիտ չէ իրեն ի նպաստ եղած յայտարարութեանց, նոյնպէս երբէք կարևորութիւն չը տար, վարժարանիս և իւր Տնօրէն-դասատուին դէմ եղած հրատարակութեանց, այլ սառնն անտարբերութեամբ ու արհամարհանօք կը դիտէ զայնս, զի վարժարանիս նպատակը մեծ ու վսեմ ըլլալով՝ կը պարտաւորի միայն անոր դործադրութեան աշխատիլ լուռ ու մունջ։

Այս առթիւ պարտք կը համարիմք մեր խորին շնորհակալութիւնը յայտնել հրապարակաւ այն արժանապատիւ և մեծարոյ անձանց, որք ընկերական վարժարանն այցելելու բարեհաճելով՝ իրենց համակրական ու քաջալերական ցոյցերով խրախուսած են զայն։

ԿԷՐԻՊԱԿ

Մեր շաբաթ աւուր թուոյն մէջ հրատարակեալ Ն. հոկտ. թուականաւ փարիզի հեռագրոյն վերջին մասը տպագրական երկու սխալներու պատճառաւ անհասկանալի եղած լինելով, այդ հատուածն հարկ կը համարիմք վերստին հրատարակել 'ի ստորև.

«Պ. Քոշութ Գաղղիոյ խորհուրդ կուտայ Ռուսիոյ հետ դաշնակից լինելու, կըսէ թէ Պիզմարք իշխանը կը ջանայ Հոյնէլզիաղղիա. քայց ինք (Պ. Քոշութ) համոզուած է որ Պիզմարք իշխանն հանրապետութեան պետական մարդիկը չպիտի կրնայ խաբել, ինչպէս խաբեց երբեմն Շերուրդ Նաբուլեան։»

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Ռուսաստան սովորած մի Հայ երիտասարդ կը փափաքի մայրաքաղաքիս ազգային դպրոցներուն մէջ աշխարհագրութեան և պատմութեան դասերն աւանդել։ Պէտք ունեցողները թող հաճին դիմել Պաղչէ Գաւառ Միլիտինեցի Պ. Գէորգ Վարդանեանի խանութը։

ԻԼԱՆ

Նեղամիտ Նանը Սզիզ իսարէսի աէկիրմէնլէրի հասարամբնատ թարիխի դարարընատ իմիսարէն պիր այ միրուրինէ դատար եէվմի օն ալթը պին ալթը եիւզ ալթմըշ դը յէսի դալտրրըլմադ վէ էսմանը քէրէկի ղ ալարրմադատան էվվել սիմ մէճիտիյէ երիկիրմի դրուշ հիսապիյլէ նադատէն վէ ըէշինէն վերիլմէք չարթը վէ շէրայիթը սայիրէսիյլէ ֆիրուխթի իտիլէճէք օլան պէշ եիւզ պին գըյէ քէրէկին իճրա իտիլէն միւզայիտէսինտէ պէհէր դը յէսի օն պիր փարա վէ պիր փարանրն եիւզ ճիւզինէէն եիկիրմի պէշ ճիւզինէ թայիպլի էօհտէսինտէ դալմըշ վէ թըշրինի էվվելը բումինին սէքիզինճի բազար իրթէսի կիւնիւ թէբրար միւզայիտէսինին իճրասը մուդարրէր պուլունմուշ օլմադլա, իշթիրասընա թայիպ օլանլարընն եէվմի մէղբիւրատէ Ցարի Շուբայի ասքէրիյէ կէլմէլէրի։

3 թըշրինի էվվել 1879

Պապը Մէրասքէրի

ԳԸՂ ԴՈՒԼՈՒՄ

ԳՈՐԾԱՐԱՆ

ԵԷՆԻՃԷ ՀԻՈՒՍՈՒ

Զիչնք Պաղար Սուլթան

Համամ փողոց թիւ 2

և մեծ մթերանոց 'ի նոյն փողոց թիւ 43

Սոյն գործարանին տնօրէնութիւնը, որ երկար տարիներ 'ի վեր ծխախոտի առևտրով կ'զբաղի, մեծ քանակութեամբ Եէնիճէի, Տրամայի և. Պաֆրայի ծխախոտ պատրաստած է։ Մեր մթերանոցը պատուել ուզող անձինք, ինչպէս նաև ծխախոտաճառք կրնան ապահով ըլլալ, որ Այսուլուէն ուղղակի բերուած մեր ծխախոտներուն թէ՛ որակութենէն և թէ՛ գիներէն շատ դոհ պիտի ըլլան։

Մեր գործարանէն ելած ծխախոտները մայրաքաղաքիս ամեն վաճառատուները կը գտնուին։ Մեր մթերանոցը մանաւոր յանձնարարութիւններ ալ կ'ընդունուի, ինչպէս նաև թղթակցութիւն Եւրոպոյ և օտար պիւռոներու հետ՝ խիստ չափաւոր գիներով։

Մրուէռ Արշաղ- և Ընկ.

ԱՄԵՐԻԿՅԱՆ ՇԻՈՒՂ

Ցայսմիկ 5 տր. երկաթագ. Ջեռուցիչ մեր, երբէք տաքնալու համար կը մնայ, մեր Հայրենական ժողովրդեան մէջ չարաբաստ վիճակ մը, մանաւանդ գիւղերու, սառնցքի ամենամեծ պատճառն է, անգրագիտ մեծ, ջերմին գրքերուն մեջ կարդալն կամ հանելու մեջ ցրեր, և այս նեղութիւնները ամենայն տարեվերջ կը սառակոծան տարբեր տաք երանգներ : Ուրեմն ամենուն ալ առաջը կուգայ ու կը բերվի, որով երանգ, յուրաքանչիւրն մեծ ի լեր գնոյց : Գործածուիները շատ գոհ են : Ուրեմն միայն իրարու, գնեն տարեվերջ կամ գարնանի երանգներ կամ ամբողջ տարի գործ կը դնեն : Ամենայն ոչ ամենայն ոչ ամենայն ոչ կը բերվի, որով երանգ, յուրաքանչիւրն մեծ ի լեր գնոյց : Գործածուիները շատ գոհ են : Ուրեմն միայն իրարու, գնեն տարեվերջ կամ գարնանի երանգներ կամ ամբողջ տարի գործ կը դնեն :